ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ ԿԴԱՌՆԱՐ 62 ՏԱՐԵԿԱՆ

Կատարյալ հերոսության մարմնավորում և դաժան իրականությանը չհամապատասխանող վեհ ու անձնուրաց կերպար: Անընկալելի մտածողությամբ և լեգենդին հատուկ մարդկային հատկանիշներով օժտված անհատականություն:

Այդպիսին էր Մոնթեն՝ հայրենասիրություն, արդարություն, ազնվություն, նվիրվածություն արժեքների կրողը, իսկ այդ արժեքները մարդու կողմից գնահատվող կարևոր իրողություններ են: 13 տարեկանում գիտակցելով իր հայ լինելը՝ տարիներ հետո հայրենի երկրի ու հողի ուժգին կանչը Մոնթեի հոգում կարողացան տեղի տալ մի ահռելի զգացումի, որ մարդկային լեզվով կոչվում է հայրենասիրություն: Հողի կանչով նա եկավ, եկավ ու դարձավ զինվոր, եկավ ու դարձավ փրկիչ, եկավ ու հայրենիքի մասին ունեցած իր իմացություններն ամրագրելու և հայկական Արցախը հայի ձեռքում պահելու աներեր վճռականությամբ: Ավոն գիտեր մաքառել, գիտեր հոգևորի և նյութականի անհավանական ձուլվածքից առանձնացնել առաջնայինն ու գաղափարականը և այդպիսով դառնալ գաղափարի մարդ, գաղափարի զինվոր: Գաղափարներ, որոնք հատուկ էին միայն Մոնթեին, որոնց հասցեատերը միայն Մոնթեն էր, և որոնցով կարողացավ վարակել ժողովրդին ու դառնալ երաշխավոր ու պատճառ հաղթանակի: Գաղափարներ, որոնք անասելի մեծ ազդեցություն գործեցին ազատատենչ արցախցու ազատության ձգտող հոգուն: Հանգամանքների բերումով հայրենիքից հեռու ծնված ու ապրած Մոնթեն անվերապահորեն միաձուլված էր հայրենիքին: Աշխարհի վրա ապրող յուրաքանչյուր ազգ, ցեղ, ժողովուրդ պետք է երազեր Մոնթեի տեսակի որդիներ ունենալ, քանզի դա նրանց անպարտ մնալու և պատվով ապրելու բացառիկ երաշխավորներից մեկն է: Դժվար է երևակայել հպարտության ավելի մեծ զգացում, քան այն, որ քո ազգակիցը Մոնթեի տեսակն է: Հայ մարդու կյանքը աներկբայորեն իմաստավորված է նաև Մոնթեների գոյությամբ: Շնորհավոր ծնունդդ, հայի լավագու՛յն տեսակ, շնորհավոր ծնունդդ, Մե՛Ծ ՄԱՐԴ:

Ասպրամ ԱՎԱՆԵՍՅԱՆ,
լրագրություն 1-ին կուրս

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴԻՏԵԼ ԵՆ «ԱՐԱ ՊԱ ՍՏԻ ՊԵՆ ԿԻՆԻ ԿԱՄ ԱՐՑԱԽՅԱՆ ՍԻՐՈ ՀԵՔԻԱԹ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ուսանողների միջազգային օրվա առթիվ ԱրՊՀ ֆինանսավորմամբ բուհի ուսանողները նոյեմբերի 18-ին դիտել են Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի «Արա պա ստի պեն կինի կամ Արցախյան սիրո հեքիաթ» ներկայացումը:

Ներկայացումը դիտելու նպատակով համալսարանականների համար ձեռք է բերվել 500 տոմս, ինչը ոգևորությամբ են ընդունել ուսանողները: ԱրՊՀ ՈՒԽ նախագահի խոսքով՝ ուսանողները մեծ բավականություն են ստացել ներկայացումից:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Նանե Հարությունյան, լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 7
ՆՈՅԵՄԲԵՐ
2019

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՈՒՍԱՆՈ՛Ղ

Նոյեմբերի 17-ը նշվում է որպես Ուսանողի միջազգային օր:

Ուսանողի միջազգային օրվա առթիվ շնորհավորանքներ են հղում ԱրՊՀ ուսանողական խորհրդի նախագահները:

Ուսանողական տարիները մեր կյանքի ամենաակտիվ ու թանկ հիշողություններով լի տարիներն են: Այսօրվա ուսանողը մեր երկրի ներկան և ապագան է: Գիտակից երիտասարդություն ունեցող երկիրն ու ժողովուրդը վստահությամբ են նայում ապագային: Մեզանից միայն պահանջում է արդյունավետ օգտագործել սովորելու, գիտելիքներ կուտակելու համար մեզ ընձեռված հնարավորությունները, նախաձախնդիր և հետևողական լինել գիտելիքների յուրացման հարցում, լիարժեք կրթությամբ նպաստել մեր միասնական հայրենիքի բարօրությանը: Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ շնորհավորում եմ «ուսանող» կոչումը կրող բոլոր երիտասարդներին և ցանկանում մեծ եռանդ, անկոտրում կամք, գիտելիքների անսպառ պաշար և հաջողություններ ուսման բնագավառում: Թող բոլոր ուսանողները կյանքում գտնեն իրենց արժանի տեղն ու դերը, մշտապես հավատարիմ մնան մարդկային վեհ կոչմանը, ակտիվ ու հետաքրքիր անցկացնեն ուսանողական անկրկնելի տարիները:

Լիլիթ ՄԱՐԳԱՐՅԱՆ,
ԱրՊՀ ՈՒԽ նախագահ

* * *

Սիրելի՛ ուսանողներ, շնորհավորում եմ Ուսանողության միջազգային օրվա առթիվ: Ուսանողությունը յուրաքանչյուր պետության զարգացման ու կայուն առաջընթացի կարևոր շարժիչ ուժն է: Մեր ներուժը ոչ միայն պետության հզորության, այլև զարգացման գրավականն է: Այսօր հենց մեզ է վստահված հզոր պետության կառուցման ու կայուն զարգացման ապագան

կանխորոշելու հնարավորությունը, քանի որ խելացի, մասնագիտական գիտելիքները հարստացնել ձգտող երիտասարդներով է պայմանավորված գիտական մտքի զարգացումն ու ողջ հասարակության առաջընթացը: Մաղթում եմ ձեզ առողջություն, երջանկություն և կրթական ու գիտական նորանոր բարձունքների հաղթահարում, հաջողություններ ու համարձակ ձեռնարկումներ՝ ի նպաստ հասարակության և ի շահ մեր պետության:

Աշխեն ԱՍՐՅԱՆ,
պատմության և իրավագ. ֆակուլտետի ՈՒԽ նախագահ

* * *

Սիրելի ուսանողներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ այս գեղեցիկ ու խորհրդանշական տոնի առթիվ: Ուսանողների միջազգային օրը և, առհասարակ, ուսանողը, յուրաքանչյուր պետության հենասյունն է, պետության ներկան ու ապագան, իսկ երկրի հուսալի ապագայի ամենակարևոր գրավականը բանիմաց, կիրթ ու բարձր արժեքներ կրող ուսանողն է: Օրեցօր ձևափոխվող և առաջընթաց ապրող աշխարհում միայն արդիական գիտելիքներով ու կրթական բարձր մակարդակով երիտասարդները կարող են դիմակայել պետության առջև ծառացած մարտահրավերներին: Շնորհավորում եմ բոլոր ուսանողներին և ցանկանում լավատեսություն, եռանդ, հաստատուն կամք, ուսման մեջ հաջողություններ ու բոլոր նպատակների իրականացում:

Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆ,
տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒԽ նախագահ





Սիրելի՝ ուսանողներ, ամենայն անկեղծությամբ շնորհավորում եմ ձեզ ուսանողների միջազգային օրվա առթիվ: Ցանկանում եմ, որ դուք ձեր կյանքի լավագույն տարիները օգտագործեք միայն ամենայն պատասխանատվությամբ և հավաքեք գիտելիքների անհրաժեշտ պաշար, որ կուղեկցի ձեզ ողջ կյանքի ընթացքում: Թող որ այսօրվա բարձր տրամադրությունը ձեզ ուղեկից լինի ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ պարգևելով նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ: Համոզված եմ, որ կարող եք հաղթահարել ցանկացած դժվարություն և դարձնել մեր երկրի ապագան այնպիսին, ինչպիսին երազում ենք բոլորս:

Եվս մեկ անգամ շնորհավորելով ձեզ՝ մաղթում եմ քաջառողջություն և մասնագիտական հաջողություններ:

Ինեսսա ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ,
բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ

Ընդունե՛ք ջերմագին շնորհավորանքներս ուսանողների միջազգային օրվա առթիվ: Մաղթում եմ, որ մեր համալսարանական տարիները լավագույնս օգտագործենք գիտելիքներ ու հմտություններ ամբարելու նպատակով: Բոլորիս ցանկանում եմ լավատեսություն, եռանդ, հաստատունկամք ու բեղմնավոր աշխատանք:

Ամենայն բարին ու լուսավորը մեզ, սիրելի՛ ուսանողներ:



Էդիտա ԱՌՍՏԱՄՅԱՆ,
բնագիտական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ

* * *

Սիրելի՛ ուսանողներ, ցանկանում եմ բոլորիս ուսանողական հաճելի և անմոռաց տարիներ, մաղթում եմ, որ ուսանողական տարիներին ստացած մեր հարուստ գիտելիքները, հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը օգնեն մեզ սեփական ունակություններն ու ձիրքերը ի սպաս դնել երկրի և ժողովրդի հետագա բարգավաճմանը, քանի որ բարեկիրթ, մասնագիտական բարձր կարողություններով օժտված երիտասարդների վրա է խարսխվում զարգացած, ուժեղ ու տնտեսական ամուր հիմքեր ունեցող պետության տեսլականը:

Հռիփսիմե ՄԿՐՏՉՅԱՆ,
մանկավարժություն և սպորտ ֆակուլտետի ՈՒԽ նախագահ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ՝ «ԻՐԱԶԵԿ ՈՒՍԱՆՈՂ» ԽՈՐԱԳՐՈՎ

Արցախի պետական համալսարանում բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել է «Իրազեկ ուսանող» խորագրով ինտելեկտուալ խաղ: Մրցույթին մասնակցում էին ֆակուլտետի առաջին կուրսեցիները:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ինեսսա Առուստամյանի խոսքով՝ ինտելեկտուալ խաղի նպատակն էր ստուգել առաջին կուրսեցիների իրավագիտակցության մակարդակը, գիտելիքները, մտքի ճկունությունը, նաև համոզվել, թե ինչքանով են տեղյակ իրենց իրավունքներից: «Նման մրցույթները նպաստում են ուսանողների տրամաբանական մտածողության զարգացմանը, բազմաբովանդակ գիտելիքների հաղորդմանը, արդյունավետ ուսանողական ժամանցի ապահովմանը»,- ասել է ՈՒԽ նախագահը:

Հաղթող թիմի մասնակիցները պարգևատրվել են գրքերով:

ԻՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇՈՒՆԸ

Շատ եմ սիրում աշունը՝ բազմագույն, դյուքիչ, գեղեցիկ ու ներդաշնակ: Նայում ես՝ շուրջդ բազմաթույր ծառեր, գետնին թափված տերևներ: Ոտքերիդ տակ խշշում են տերևները, և թվում է, թե այդ խշշոցը հոգուդ խորքից ես լսում: Տերյանական շունչ եմ զգում աշնան մեջ: Նա կլանում է աղմուկը և մեղմ մեղեդիներով պարուրում օդը:

Թախծոտ են ասում աշնանը, համամիտ եմ, բայց աշնան արևը կարող է նաև իր ջերմությունը տարածել: Մի՞թե չեն ջերմացնում և շուրջբոլորը ուրախությամբ լցնում այն մանուկները, ովքեր իրենց մայրիկի ձեռքից բռնած, պայուսակով, ծաղիկներով, մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ իրենց առաջին քայլերն են դնում դպրոցի շեմին:

Ամեն անգամ, աշնան առաջին օրը, սև ու սպիտակ հագած, շտապում էի դպրոց՝ ընկերներիս տեսնելու, մտնում դասարան, նստում արդեն հարազատ դարձած աթոռին...

Այլ էր այս աշունը. նոր էր՝ նոր գույներով, երանգներով. կարծես նոր ներկապնակ էր գնել և ուզում էր փորձել բոլոր գույները: Այս անգամ էլ էի շտապում, բայց արդեն համալսարան, ոչ տեսնելու ու կարոտս առնելու, այլ ծանոթանալու համակուրսեցիներիս հետ, ովքեր հետո ընկերներս պիտի դառնային: Փոխվել է ամեն բան. դասարանը դարձել է լսարան, ուսուցիչը՝ դասախոս: Ես էլ արդեն ուսանող եմ:

Աշունը շարունակում է ոսկի շղարշով պատել աշխարհը: Շարունակվում է աշունը՝ ուսանողական իմ առաջին աշունը:

Անահիտ ՊՈՂՈՍՅԱՆ,
Ֆինանսներ, 1-ին կուրս

* * *

Դու նորից եկար: Եկար նույն գույներով, նույն քամիներով, նույն «հոգնած» տերևներով, բայց նոր ընկալմամբ: Անզգուշաբար նեղացնում ենք տերևներին, հաշվի չառնելով, որ խնդիրը ոչ թե տերևների, այլ մեր մեջ է: Ինչևէ, սա իմ ուսանողական առաջին աշունն է: Մեր հերթական հանդիպումը նոր քաղաքում արդեն որոշակիորեն տպավորվել է իմ մեջ: Ծառերի կողքով անցնելիս համակ ուշադրությամբ լսում եմ տերևների երգը: Մեզ համար են դրանք երգում ու վերջում էլ ցած թափվում: Ցավոք, մենք հաճախ չենք նկատում այդ: Ինչ խոսք, գեղեցիկ ես, բայց դու էլ վերջ ունես: Ուսանողական կյանքն այնքան արագ է անցնում, որ թվում է՝ մի քանի օրից մի վերջին անձրևով նշան կտաս, որ արդեն ժամանակն է:

Ու վերջին անձրևից հետո կանցնի հերթական անհրաժեշտ աշունը: Անհրաժեշտ՝ առանց հրաժեշտի խոսքերի: Հրաժեշտը քո անհրաժեշտ տեսակին ընդհանրապես չի սազում: Բայց ինչ արած, մեկ է, հրաժեշտն էլ կոչումիդ մեջ բացեիբաց է երևում:

Անձրևից հետո էլ քեզ չեմ փնտրի: Օդի խոնավությունն իրականություն կբերի ինձ, վերջապես կհասկանամ, որ առաջ գնալ է պետք: Անձրևը մաքրած ու տարած կլինի փողոցի կեղտը, բայց դա ինչ նշանակություն ունի, եթե փողոցը նույն ամայի ու միայնակն է մնում, ինչպիսին կար անձրևից առաջ: Մարդիկ կփակեն պատուհանները, որ հանկարծ մաքուր անձրևը չկեղտոտի կամ ներս չսողոսկի ու մի քիչ թաց դարձնի տան ներսի չորությունն ու կոպտությունը: Ոչ ոք չի նկատի հերթական անձրևի տարբերվող լինելը: Ես, որ չէի վախենում անձրևից, որ ներս էի հրավիրում նրան, զրույցի բռնվում կաթիլների հետ, ամուր կփակեմ պատուհանս, որ քամին չփչի դեմքիս: Ու ես, մենք...

Պակասեցինք...

Մի քիչ էլ մաքուր անձրև պակասեց, ինձնից ու քեզնից խլված անձրև: Դու ինձնից խլեցիր, ես՝ քեզնից: Վերջում ես քո մասնիկը կորցրի, դու՝ իմ: Իմաստն էլ հենց սրա մեջ է. կորցրու, որ հետո գտնես:

Արտաքնապես ոչինչ չի փոխվի: Անձրևով հիացող երկուսս կհիասթափվենք, ու ես ամուր կփակեմ տան բոլոր պատուհանները, մինչև մեր հաջորդ հանդիպում:

Վերջում էլ օրագրումս կգրեմ «Ուսանողի մի կում աշնանային կորուստ»...

Հ.Գ.Քանի դեռ ժամանակ կա, երջանկությունը կյանքի առաջնային շուկայից գնեք, երկրորդայինից գնելու դեպքում ավելի թանկ եք վճարելու՝ ձեր կորցրած ժամանակի հաշվին:

Քրիստինե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ֆինանսներ, 1-ին կուրս

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱրՊՀ «Քաղաքագիտություն» 4-րդ կուրսի ուսանող Բորիկ Բաղդասարյանը Ուսանողի միջազգային օրվա առթիվ հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել «Լավագույն բանաստեղծություն» անվանակարգում: Բորիկը 2016-ի ապրիլին ժամկետային զինծառայող էր և զենքը ձեռքին պատերազմում էր Մատաղիսի դիրքերում: Ծնունդով Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքից է: Ծնվել է 1997թվականի մարտի 3-ին, զինվորականի ընտանիքում: Բազմազավակ ընտանիքի (2 քույր և 4 եղբայր) 3-րդ զավակն է: Ավարտել է Մարտունու թիվ 1 միջնակարգ դպրոցը, ստացել է նաև երաժշտական կրթություն տեղի երաժշտական դպրոցում: Ստեղծագործում է նաև երաժշտության բնագավառում, ինչպես նաև սիրում է զբաղվել մուլտիպլիկացիոն նկարչությամբ: Ստեղծագործում է դեռևս դպրոցական նստարանից: Օրերս լույս է տեսել նրա «Զգացմունքների խաչուղիներում» բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Ստորև ներկայացնում ենք նրա ստեղծագործություններից:

Իմ հրաժեշտից Դու չսրտնեղե՛ս, չտխրե՛ս հանկարծ...
Իմ վերադարձից կրկին կժպտան, կշողան նորեն աչքերդ խամրած...
Իմ հրաժեշտն ու հեռացումը թող քո լույս աչքերի քունը չխլեն...
Իմ վերադարձն ու բարևն առաջին քեզ կնվիրեմ...
Իմ հրաժեշտով Դու չմռայլվե՛ս, ուրախ օրերիդ թախիծ չշաղե՛ս...
Իմ վերադարձի լուսե հեքիաթով օրդ կլցնես
Եվ ուրախության ջինջ արցունքներով մեր հանդիպումը կդիմավորես...
Իմ հրաժեշտում Դու ատելություն բնա՛վ չտեսնե՛ս
Եվ բաժանումի ու հեռացումի պատճառ չփնտրե՛ս.
Իմ վերադարձում վերադարձի իմ պատճառն անպատճառ ինքդ կգտնես...
Իմ հրաժեշտին Դու երբե՛ք-երբե՛ք հրաժեշտ չտա՛ս...
Իմ վերադարձին հետդարձի նոր տոմս ու բաժանումի առիթ, խնդրում եմ, էլ երբե՛ք չտա՛ս...

ԵՐԲ ՍԻՐՈՒՄ ԵՄ

Էլեն Ստեփանյանը սովորում է ԱրՊՀ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսում: Ծնվել է 1999թ. հուլիսի 9-ին Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում: Ստեղծագործում է մանկուց: Ներկայացնում ենք նրա ստեղծագործություններից.

Աշունն է կրկին զարդարել հոգիս
Տարբեր գույներով, տարբեր հույզերով,
Տխուր է հոգիս կրկին այդ ցավից,
Այդ զգացմունքից, խենք մենությունից:

Տերևաթափ է կարծես ներսումս,
Ամեն գույնի հետ նորից փոխվում ես,
Ես չեմ ճանաչում էլ իմ աշունը,
Աշունն այն գունեղ՝ հենց քո գույներով:

Կարոտ մնացի աշնան գույներին,
Արևն է շոյում ամեն տերևիս,
Ներդաշնակությունն, չէ, չէի ասի
Տերևն է խամրում ինչպես մեղմ հոգիս...

* * *

Երբ սիրում եմ...

Երբ սիրում եմ, խավար չեմ տեսնում,
Մայրամուտի մեջ արև եմ տեսնում,
Խավարի մեջ լույս՝ սիրո շողերով,
Ու փայլող աչքեր հավերժին ծգտող:

Երբ սիրում եմ, չեմ տեսնում ոչինչ
Ինձ ցավ պատճառող, ինձ մտահոգող,
Նոր օրենքներ եմ ստեղծում ինձ համար,
Նոր ճանապարհներ բացում իմ առաջ:

Երբ սիրում եմ, արյան փոխարեն
Կարոտն է հոսում ու խոսում ինձ հետ,
Ցողերն են ծաղկին նոր շունչ պարգևում,
Ու մեզ տանում են դեպի նոր գարուն:

Ա՜խ, երբ սիրում ես...
Սովորականն է անսովոր դառնում,
Աստղերն են փայլում քո մութ գիշերում,
Եվ անափ հոգիս նոր շունչ է առնում:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ

Արցախի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի «Թարգմանչական գործ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Վիտալի Պետրոսյանը հոկտեմբերի 24-ից 31-ը մասնակցել է Վրաստանի Ռուսթավի քաղաքում Erasmus+ ծրագրի շրջանակում կազմակերպված ծրագրին: Նա ներկայացրել է WIYU-Armenia կազմակերպությունը, որի գրասենյակը գտնվում է Հայաստանում:

Վիտալիի խոսքով՝ ծրագիրը մարդու իրավունքների պաշտպանությանը, ատելության խոսքի և խտրականության վերացման միտումներ ուներ, որին նա որպես թիմի ղեկավար էր մասնակցում: «Ծրագրին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Ֆինլանդիայի, Բուլղարիայի և Մոլդովայի թիմերը: Բոլորն էլ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել: Ամեն օր մի նոր ծրագիր էինք ներկայացնում, որոնք հագեցած էին ինչպես տեսական, այնպես էլ գործնական մասերով»:

Ծրագրի շրջանակներում մասնակիցները եղել են Թիֆլիսում՝ այցելելով տեսարժան վայրեր: «Շատ գրավիչ էին մեր հայկական եկեղեցիները, Խաղաղության Կամուրջը և դարերի այլ վկաներ»,- ընդգծել է Վիտալի Պետրոսյանը՝ հավելելով, որ հետաքրքիր ու անմոռանալի օրեր են անցկացրել:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՆՁՈՐԵՍԿ

Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ պատմության և իրավագիտության ֆակուլտետի

«Պատմություն» մասնագիտության մի խումբ ուսանողներ և ամբիոնի դասախոսներ ուսանողական խորհրդի ու գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպել են էքսկուրսիա դեպի պատմական Խնձորեսկ:

Ուսանողները հիասքանչ բնության գրկում անց են կացրել անմոռանալի ժամանակ և ծանոթացել տարածքի պատմամշակութային հուշարձաններին, այցելել Սուրբ Հռիփսիմե եկեղեցի, Մխիթար սպարապետի գերեզմանին: Ուսանողները ունեցել են անկրկնելի օր և վերադարձել դրական ու հիասքանչ տպավորություններով:

Աշխեն ԱՍՐՅԱՆ,
պատմության և իրավագիտ. ֆակուլտետի ՈՒԽ նախագահ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՆ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է



Արցախի պետական համալսարանում սովորելն արդեն իսկ մեծ պատասխանատվություն է, և այդ պատասխանատվությունն էլ ավելի է կրկնապատկվում, երբ սովորելու հետ համատեղում ես ևս մեկ պատասխանատու աշխատանք՝ ուսանողական խորհրդի նախագահի պաշտոնը: Նոր ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ է ընտրվել «Հայոց լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի Ինեսսա Առուստամյանը, ում հետ զրուցել ենք հետաքրքիր թեմաների շուրջ: Ձեզ ենք ներկայացնում հարցազրույցը:

-Ինեսսա, ինչպե՞ս ստացվեց,որ ընտրվեցիր ոսանողական խորհրդի նախագահ:

-Ճիշտն ասած, ինձ համար սկզբից անսպասելի էր ուսանողական խորհրդի նախագահ լինելու առաջարկ ստանալը: Մինչ ընտրվելը ունեի առաջին փոխնախագահի պաշտոնը, իսկ ընտրվելու օրն էլ ծրագիրս ներկայացնելուց հետո 36 կողմ քվեարկողների շնորհիվ պաշտոնապես ընտրվեցի:

-Հետաքրքի՞ր է ՈՒԽ գործունեությունը, հասցրե՞լ ես միջոցառումներ կազմակերպել:

- Այո, շատ հետաքրքիր է լինել ՈՒԽ կազմում, մասնակիցը և նախաձեռնողը լինել տարբեր ծրագրերի, միևնույն ժամանակ դա շատ պատասխանատու աշխատանք է, քանի որ ամեն ինչ արվում է ուսանողության համար: Հասցրել եմ ինտելեկտուալ խաղ ղեկավարել, որը կազմակերպել են մեր առաջին կուրսեցիները:

-Կարողանու՞մ ես ֆակուլտետի բոլոր ուսանողներին ընդգրկել ՈՒԽ կողմից կազմակերպվող միջոցառումներին:

-Քանի որ ես նորեկ եմ այս աշխատանքում, ամեն կերպ փորձում եմ այնպես անել, որ ուսանողների համար արդյունավետ լինեն կազմակերպվող բոլոր միջոցառումները, ամեն անգամ ձգտում եմ փորձառուներից ավելին սովորել ու ինձ լավ դրսևորել այս գործում:

Ուսանողների հետ շատ հետաքրքիր է. մեզ սպասում են ակտիվ օրերը:

-Ի՞նչ ծրագրեր ունես առաջիկայում:

-Առաջիկայում մեզ սպասվում են բավականին ակտիվ օրեր: Քննաշրջանից հետո նախատեսում ենք կազմակերպել ամենամյա դարձած «Իրազեկ ուսանող» ինտելեկտուալ խաղը: Նոյեմբեր ամսվա կեսից շարունակաբար հանդիպումներ իրականացնել Ստեփանակերտում և շրջկենտրոններում ավագ դասարանների աշակերտների հետ՝ նրանց մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու համար: Ամանորին նախատեսում ենք կազմակերպել «secret santa» խաղ-միջոցառումը, և,կարծում եմ, որ ուսանողական խորհուրդը հետևողական կլինի դրա կազմակերպմանը: Մեր կազմակերպելիք միջոցառումները այսքանով չեն սահմանափակվում, դրանք շարունակական բնույթ կկրեն:

- Ինչպե՞ս անցավ նոյեմբերի 3-ից 5-ը ԱրՊՀ-ում կազմակերպված ուսանողական միջազգային գիտաժողովը:

-Ես առաջին անգամ եմ մասնակցում միջազգային գիտաժողովի, շատ տպավորված եմ: Ամեն ինչ ամենաբարձր մակարդակով էր արված: Շատ կարևոր և արդյունավետ է այդպիսի ձևաչափով միջոցառումներ կազմակերպելը, քանի որ ամրապնդվում է համագործակցությունը ԱրՊՀ-ի և ՀՀ բուհերի միջև:

-Ի՞նչ կցանկանայիր փոխել ՈՒԽ կազմում:

-Հիմա որևէ փոփոխություն չէի ցանկանա կատարել, բացի ՈՒԽ անդամների համալրումը տղաներով:

Հարցազրույցը՝ Մանե ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ,

լրագրություն 3-րդ կուրս

«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ԵՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ»

Յուրաքանչյուր նոր ուսումնական փուլում մայր բուհը իր հարկի տակ է հանգրվանում հարյուրավոր ուսանողների: Այս անգամ էլ «Քո ժամանակ»-ն անդրադարձավ առարկայական օլիմպիադաների և սպորտային միջոցառումների մրցանակակիր, 2014թ-ին կայացած «Մշակութային խաչմերուկ» ասմունքի մրցույթի հաղթող, բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Ռուզաննա Սահակյանին:

-Ռուզաննա, քո կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինի այսօրվա ուսանողը:

-Ուսանելու, ուսանող լինելու քաղաքականությունը բազմավեկտոր է: Ուստի բոլոր վեկտորների գործածությունը այս համակարգում շատ կարևոր է: Լինել «բազմավեկտոր» նաև անձնապես: Դարը պահանջասեր է: Այսօր պետք է չհագենալ ու սովորել: Աղբյուրները շատ են, խթանող հանգամանքները՝ անթիվ:

-Ո՞վ է եղել քո առաջին ուսուցիչը ոչ միայն գիտության ոլորտում, այլև կյանքի այս կարևոր փուլում:

-Կյանքի բոլոր փուլերում ես ունեցել եմ լոկ երկու խորհրդատու: Իմ շատ սիրելի ծնողները: Իմ ցանկացած ընտրության երաշխավորը հենց նրանք են: Բայց ամեն դեպքում,առհասարակ կյանքում, կա մի «հանրահաշվական» սահման, որտեղ անձը պետք է կայանա ինքնակամ, առանց սահմանափակումների և խորհուրդների:

-Կրկին անդրադառնանք ուսանողական կյանքին և փորձենք ճշտել, թե որքանով ես հասցրել ապրել ուսանողական բուռն կյանք և բուհական կյանքում քո ակտիվությունն ի՞նչ է գրանցել:

-Վերջերս մասնակցել եմ ԱրՊՀ կազմավորման 50-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսին, իմ առաջին փոքր ու մեծ գիտաժողովին: Համոզված եմ, որ նմանատիպ քննարկումներն ու շփումները օգտակար են, որպեսզի մենք՝ ուսանողներս, բացահայտենք այն մեխանիզմները, որոնցով կարող ենք դիմակայել բոլոր մարտահրավերներին: Ընդ որում, այդ տեսանկյունից երիտասարդներիս փորձը, մշակած թեմաները, գիտական մոտեցումները նույնպես չափազանց կարևոր են: Գիտաժողովի շրջանակներում, որն ընդգրկել է մայր բուհի մասնագիտական ուղղվածության բոլոր բաժինների ուսանողների ելույթները, քննարկվել են նաև հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցեր: Նոր ձևաչափով քննարկումներն անցել են լայն օրակարգով՝ ներառելով մեր երկրի համար հետաքրքրություն ներկայացնող գրեթե բոլոր հարցերը:

-Ո՞րն էր քո ներկայացրած թեման գիտաժողովում:

-Իմ թեման լրիվ այլ հարթության վրա էր՝ «Կավարձև կարգավորված բազմություններ»: Սա զուտ գիտական ուսումնասիրություն էր և նորարարություն: Ընդ որում պրոֆեսորադասախոսական կազմը շատ հավանեց աշխատանքս: Այս գիտաժողովին բնորոշ էր տարբեր մակարդակներով և ձևաչափերով ելույթների և աշխատանքների քննարկումը: Ցանկանում եմ առանձնահատուկ ընդգծել, որ բոլոր ներկայացված աշխատանքների լավագույն գնահատականը բովանդակությունն էր: Կատարված հետազոտություններն ու ուսումնասիրությունները շատ էին, ինչի մասին հանգամանալից խոսվեց արդեն մասնաբաժինների ելույթների ընթացքում:

-Այս ամենից զատ, գիտեմ, որ դու ակտիվ ես և՛ ուսանողական, և՛ ստեղծագործական դաշտում: Արդյոք հաջողվու՞մ է մաթեմատիկական բանաձևերի մեջ ծնունդ տալ այն տողերին, որոնք հետո դառնում են քո գրականասեր համակիրների ոգեշնչման աղբյուրը:

-Իմ խորին համոզմամբ, ոչինչ չի խանգարում, որ ես պարզապես ճերմակ թղթին հանձնեմ մտքերս: Արդի ինֆորմացիայի հոսքում մենք պետք է մեծ ժամանակ տրամադրենք վերլուծությանը, որպեսզի չդառնանք լոկ սպառողական դաշտ ու կորցնենք ստեղծագործելու կարողությունը:

-Ուսանողական կյանքում ծեռք բերած քո կարգախոսը:

-Ուսանողական կյանքի տարիները գնահատվում են ոչ թե երկարությամբ, այլ բովանդակությամբ:

-Քո բարեմաղթանքը ուսանողությանը՝ ուսանողական միջազգային տոնի առթիվ:

-Շնորհավորում եմ գիրն ու դպրությունը պաշտող բոլոր անհատներին: Բոլոր ուսանողներին ցանկանում եմ լինել մեր պապերի ազգանվեր գործի շարունակողներ: Իսկ ուսանողական գրիչը թող միշտ լուսաբանի ու վերծանի արդարն ու ճշմարիտը:

Հարցազրույցը՝ Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆԻ